

## **ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐ**

### **ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ԺԱՌԱՆԳԱԿՈՐԱՅ**

#### **ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՒ ԸՆԾԱՅԱՐԱՆԻ**

**2017-2018**

Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեան,  
 Լուսարարապետ Ս. Աթոռոյս,  
 Հոգեշնորհ Հայրեր,  
 Յարգելի ուսուցիչներ,  
 Բարեշնորհ սարկաւազներ և ուրարակիրներ,  
 Սիրելի ժառանգաւոր սաներ և յարգելի ներկաներ

Շնորհիւ Բարերարին Աստուծոյ, ուսումնական տարի մը եւս աւելցաւ 175-ամեայ այս հաստատութեան տարիներուն վրայ: Եւ ահա այսօր, հերթական անգամ կեցած ենք հանդիսութեանց այս բեմին ամփոփելու անցնող ուսումնական տարուան ընթացքին կատարուած գործերու արդիւնքները և փակելու անոր վերջին էջը:

Երուսաղէմի ժառանգաւորաց Վարժարանը և Ընծայարանը ըլլալով Հայ Եկեղեցւոյ առաջին հոգեւոր կրթարանը, բազում գիտակից և նուիրեալ հոգեւորականներ կրթած ու նուիրած է ոչ միայն Երուսաղէմի Առաքելական մեր Սուրբ Աթոռին, այլ նաեւ Հայաստանեայց Առաքելական Մայր Եկեղեցիին: Այս բազմարդին հոգեւոր դարբնոցը 175-տարիէ ի վեր կը թրծէ հայ երիտասարդներու հոգիները, միտքերը և սիրտերը, պատրաստելով զիրենք Ս. Աթոռոյս արժանի ժառանգորդներ ըլլալու մեծ առաքելութեան:

2017 թ. Ապրիլ 14-ին ստանձնելով ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի տեսչութիւնը, փորձած ենք մեր հնարաւորութիւնները լաւագոյնս օգտագործել Վարժարանի կրթական ծրագիրը և մակարդակը ամբողջական ու բարձր պահելու: Սեպտեմբերի վերաբացման Վարժարանն ունէր 32 ժառանգաւոր սաներ՝ Մասնաւոր դասարանի, ժառանգաւորաց Ա, Բ, և Դ դասարաններու մէջ, և ութ ուսանողներ Ընծայարանի Ա և Գ լսարաններու մէջ: Հպարտ ենք հոս յայտարարելու, որ Վարժարանիս պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, այս ուսումնական տարուան ընթացքին Վարժարան ընդունուեցան եօթը Համշենահայեր, որոնք երբ հասան Երուսաղէմ, հայերէն ոչ մէկ բառ գիտէին, իսկ այսօր անոնք գրաբարով սաղմոս կը կարդան և որպէս դպիրներ իրենց ծառայութիւնը կը բերեն Եկեղեցիէն ներս:

Վարժարանիս կրթական ծրագիրը այս տարի ենթարկուեցաւ կառուցուածքային լուրջ և բովանդակային փոփոխութիւններու: Աւելցաւ մէկ դասաժամ և փոխուեցաւ դասաժամի տեւողութիւնը: Ժառանգաւորաց Վարժարանին մէջ անցեալ տարիներուն դասաւանդուած առարկաներէն զատ, աւելցան նաեւ Երուսաղէմի Պատմութիւն և Աստուածաշունչի Պատմութիւն առարկաները, իսկ Ընծայարանին մէջ Ծիսական Աստուածաբանութիւն, Տրամաբանութիւն, Բարոյագիտութիւն և Հոգատրական դասանիւթերը: Վերոնշեալներէն զատ, աւանդուած են Հին և Նոր Կտակարանի ներածութիւն և մեկնութիւն, Քրիստոնէական, Վարք Սրբոց, Աստուածաբանութիւն,

Տօնագիտություն, Հայոց լեզու և գրականություն, Հայոց Պատմություն, Հայ և Լնդհանուր Եկեղեցույ պատմություն, Իմաստասիրություն, Հոգեբանություն, Ընկերաբանություն, Անգլերեն, Եբրայերեն և Արաբերեն լեզուներ, Վիճակագրություն, Ձայնամարզություն և Եկեղեցական երաժշտություն առարկաները: Շաբաթը մէկ անգամ, կէսօրէ վերջ, սաները մասնակցած են շախմատի դասընթացի: Նոր ուսումնական տարուայ համար եւս նախատեսած ենք փոփոխություններ կատարել կրթական ծրագրին մէջ: Մասնաւորաբար, Ժառանգաւորաց Վարժարանէն ներս պիտի դասաւանդուի Տոմարագիտություն և Մշակոյթի Պատմություն առարկաները, իսկ Ընծայարանէն ներս՝ Կանոնագիտություն, Դաւանաբանություն, Հայրաբանություն, Հովուական Աստուածաբանություն և Տեղիք Աստուածաբանութեան առարկաները: Ծրագրած ենք նաեւ լեզուներու դասաւանդումը կատարել ըստ մակարդակներու և ոչ ըստ դասարաններու: Այս նպատակով ամրան պէտք է ընենք մակարդակները որոշելու քննություն: Կասկածէ վեր է, որ այս մեթոտը աւելի արդիւնաւէտ պիտի ըլլայ և նուազ ծախսալից:

Տարուան ընթացքին կազմակերպուած են դասախօսական երեկոներ՝ տարբեր թեմաներու շուրջ՝ կրօնական, գրական, պատմական, հայագիտական և այլ թեմաներով: Նոյեմբեր ամսուն կազմակերպուած է Առաջին Օգնութեան (First Aid) դասընթաց: Այս նպատակով մասնաւոր բուժեղբայր մը հրաւիրուած էր Վարժարան, որ Վարժարանիս բժշկուհի Տիկ. Սեդա Կէճեքուշեանի հետ միասին սաներուն փոխանցեցին առաջին բուժօգնութեան անհրաժեշտ գիտելիքներ: Կազմակերպուած է նաեւ ֆիլմերու ցուցադրություն: Մարտ ամսին Ժառանգաւոր սաները մասնակցած են ՀՀ Սփիւռքի Նախարարութեան կողմէ Սարգարապատի Ճակատամարտի 100-ամեակի առթիւ կազմակերպած «Սարգարապատէն Արցախ» շարադրություններու և գծագրութեան մրցոյթին: Հոս հպարտութեամբ կ'ուզեմ արձանագրել, որ Համահայկական 2017 թ. ՀՀ Սփիւռքի Նախարարութեան կողմէ կազմակերպած մրցանակաբաշխութեան, Ժառանգաւորաց Վարժարանը և Ընծայարանը ճանչցուած է «Լաւագոյն Հայկական Կրթօճախ»՝ «հայապահպանութեան գործում նշանակալի աւանդի համար» և արժանացած է դրամական պարգևի:

Այս տարի կը լրանայ Ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի հիմնադրման 175-ամեակը: Պատրաստած ենք Վարժարանի 175-ամեակին նուիրուած հանդիսութեան ծրագիրը, որ նախատեսուած է նշել Հոկտեմբեր ամսուն: Օրերս ծրագիրը պիտի ներկայացնենք Նորին Ամենապատուութեան՝ իր հաւանությունը ստանալու:

Հակառակ 175-ամեայ իր գոյութեան, Վարժարանը չէ ճանչցուած որեւէ կառավարական հաստատութեան կողմէ և չունի իրաւական ճանաչում: Անցնող տարուայ ընթացքին մեր գլխաւոր նպատակներէն մէկը եղած է Վարժարանը օժտել իրաւական ճանաչումով: Այս նպատակով նամակ գրուած է Վեհափառ Հայրապետին, որ Գերշ. Տ. Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեանը նշանակած է՝ զբաղելու համար իրաւական ճանաչման հարցով: Արդէն յանձնած ենք պահանջուած բոլոր փաստաթուղթերը և կը յուսանք մօտ ապագային ձեռք ձգել իրաւական ճանաչում:

Այս ուսումնական տարուայ շրջանին Ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի սաները Դեկտեմբեր և Մարտ ամիսներուն մասնակցած են Notre Dame հիւրանոցի կողմէ կազմակերպած Ծննդեան և Զատիկի տօներուն նուիրուած համերգներուն, իսկ Մարտ ամսուն Museum of Nature-ի կողմէ կազմակերպուած՝ «Հայերը Երուսաղէմի Մէջ» խորագիրը կրող ֆեստիվալին:

Գալով եկեղեցական և հոգեւոր պարտականություններուն, մեր սաները այն կատարած են ամենայն ճշգրտագոյնութեամբ և սիրով, ամէն օր մասնակցելով առաւօտեան և երեկոյան ժամերգություններուն, պատարագներուն և Ս. Յարութեան թափօրներուն, ինչպէս նաեւ տօնական արարողություններուն՝ տարբեր սրբատեղիներու մէջ:

Այս տարի ունինք 10 շրջանաւարտ. հինգ Ընծայարանէն և հինգ Ժառանգաւորաց Վարժարանէն: Սիրելի շրջանաւարտներ, տարիներ առաջ Աստուածային նախախնամութեամբ դուք առաջնորդուեցաք սորվելու Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժա-

րանի և Ընծայարանի մէջ որպէս ապագայ հոգեւոր մշակներ Հայ Եկեղեցւոյ անդամ-տանին: Երբ առաջին անգամ մուտք գործեցիք Ժառանգաւորաց Վարժարանի կամարներէն ներս, վստահ եմ, որ ձեզ համար շատ անսովոր էր այս Վարժարանը և սխալած չեմ ըլլար եթէ ըսեմ, որ նոյնիսկ չէիք գիտէր ձեր նպատակը, սակայն Տիրոջ նախախնամ Աջը ձեզ օգնեց, որպէսզի Վարժարանէն սկսիք ձեր կեանքը իմաստաւորող ուղին և ճշմարտութեան ճանապարհը, ու տարիներու ընթացքին հասկցաք, որ Ժառանգաւորաց Վարժարանը կեանքի կոչուած է ճիշդ անոր համար, որ հոս ձեւաւորուի ձեր կոչումը և գիտակցութիւնը, ազգային և կրօնական ինքնութիւնը, իսկ Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը ձեր շուարած հայացքներուն ուղղութիւն ցոյց տուաւ և դաստիարակեց ձեզ կրօնական շունչով՝ ձեր մէջ ներշնչելով Հայոց պատմութեան հարազատ ոգին: Կերտեց ձեր մէջ ուղղամիտ և ազնիւ նկարագիր և դարբնեց անձանձրոյթ աշխատասիրութիւն և երկաթեայ կարգապահութիւն իբրեւ ապագայ ճշմարիտ և հաւատաւոր հայ հոգեւորականներ և հայրենասէրներ՝ օգտակար ըլլալու Հայաստանեաց Եկեղեցիին, մեր ազգին և ձեր շրջապատին:

Այս հաստատութեան կամարներուն ներքոյ մարմնով աճեցաք և հոգիով զօրացաք, ձեր միտքը գիտութեամբ լուսաւորուեցաւ և սիրեցիք ճշմարտութիւնը: Գրականութեամբ և արուեստով մշակեցիք ձեր հոգիները, ծանօթացաք քրիստոնէադրոշմ և առաքելաշաւիղ հայ մշակոյթին և սիրեցիք գեղեցիկը: Մաքուր իղձերով, առաքինի գործերով և սուրբ գրական ընթերցումներով ազնուացուցիք ձեր սիրտերը և այս ամենէն վեր ու այս բոլոր առաքինութիւնները միացնող, անոնց ոգեշնչող և կեանք տուող ներքին սուրբ հաւատքի ջահը միշտ վառ պահեցիք ձեր հոգիներու մէջ:

Սիրելի շրջանաւարտներ, ձեզի կը մաղթեմ տեսիլք և երազանք: Մեծ երազանքներ ունեցէք, ձգտեցէք ատոնց և օր մը անպայման կ'իրականանան: Երազել սքանչելի բան է, ան ձեր կեանքի յուսահատ պահերուն ձեզի յոյս կը ներշնչէ և երբ մոլորիք և չգիտնաք թէ ինչպէս ընթանաք, երազանքը անսպասելիօրէն բոցկլտացող կրակի նման, ձեզի ցոյց պիտի տայ ճանապարհ մը: Սակայն այդ կ'իրականանայ միայն, եթէ ձեր երազանքը ճմարիտ է և վեր:

Սիրելի շրջանաւարտներ կը շնորհաւորեմ ձեզ, ձեր ուսուցիչները և ձեր ծնողները, մեր բոլորի բարեմաղթութիւնները և աղօթքները ձեզ ուղեկից ըլլան: ԲԱՐԻ ԵՐԹ:

Այժմ կը ցանկանք մեր շնորհակալութիւնները յայտնել այն անձերուն, որոնք Ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի համար ունին իրենց ներդրումները:

Երախտապարտ ենք Պատրիարք Սրբազան Հօր Վարժարանի հովանաւորութեան համար: Կ'աղօթենք, որ Աստուած անոր շնորհէ առողջութիւն, ոյժ և եռանդ՝ շարունակելու մեր Պատրիարքութեան ղեկավարութիւնը Սրբոց Յակոբեանց Միաբանութեան աշակցութեամբ:

Երախտապարտ ենք Ս. Աթոռոյս Լուսարարապետ Գերշ. Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեանին իր հոգատար և բարեացակամ վերաբերմունքին համար՝ ուղղուած մեր Վարժարանին և Ժառանգաւորներուն:

Երախտապարտ ենք մեր հոգեւորական ուսուցիչներուն՝ Հայր Թէոդորոսին և Աշոտ Սարկաւագին, որոնք իրենց բազմազբաղ ժամանակը կը տրամադրեն մեր սաներուն՝ աւանդելով կրօնական նիւթեր:

Յատուկ շնորհակալութիւն կը յայտնենք Հայր Աղանին, որ սիրայօժար ստանձնեց տեսչի պարտականութիւնները իմ բացակայութեանց ընթացքին:

Այսօր Վարժարանիս փոխ-տեսուչը, ուսուցիչ-ուսուցչուհիները սրտի բերկրանքով կը նային իրենց շրջանաւարտ սաներուն, որոնց կրթութեան համար այնքան երկար տքնեցան ու յոգնեցան: Ձեր վարձքը կատար սիրելի ուսուցիչներ, կը մաղթենք ձեզ տոկուն կամք և համբերութիւն՝ շարունակելու սերունդներու կրթութեան ձեր նուիրական գործը:

Մեր խորին շնորհակալութիւնները նաեւ կ'ուզենք յայտնել Երուսաղէմի Բարեսիրաց Միութեան և Հայ Երիտասարդաց Միութեան Վարչութիւններուն, ինչպէս նաեւ

Աւագեան քոյրերուն, որոնք գեղեցիկ ականդուրիւն հաստատած են ամէն տարի մեր շրջանաւարտներուն նուէրներ ընծայելը:

**ԿՈՐԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ**  
**Տեսուչ Ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի**

**ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ**

**ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ**

**2017-2018**

Գերաշնորհ Տ. Սեւան Արք. Ղարիպեան,  
Լուսարարապետ Ս. Աթոռոյս,  
Հոգեշնորհ Հայրեր,  
Յարգելի ծնողներ, ներկաներ և շատ սիրելի շրջանաւարտներ:

2017-2018 ուսումնական տարեշրջանը ահաւասիկ հասաւ իր աւարտին, մեր յուշերուն մէջ դաջելով բազմաթիւ գեղեցիկ պահեր ու անակնկալներ:

Ոմանց համար այն եղաւ նոր արկածախնդրութեան սկիզբ, իսկ ոմանց համար ալ առաքելութեան մը աւարտ: Այսօր 12-րդ դասարանի աշակերտներուն համար պատրաստուած այս յատուկ երեկոն աւարտ մըն է, որ պիտի թափ առնէ նոր սկիզբով: Սկիզբ մը իրական աշխարհի մէջ, ուր իրենց սորվածը գործի պիտի դնեն: Այս Վարժարանէն, ձեր ակումբներէն և վերջապէս ձեր տուններէն զինուած ու պատրաստուած դուրս կու գաք շաղուելու կեանքի շաղախին և դիմադրելու անոր ալիքներուն, հասնելու համար ձեր նպատակակէտին: Բարի ճանապարհ կը մաղթեմ և կը խրատեմ որ չհեռանաք ձեր բոյնէն ուրկէ ծնունդ առիք և աճեցաք:

11 տարիներ ետք հասաւ այն պահը, երբ իմ ուսերուս դրուած այս սուրբ պարտականութիւնը հանդէպ սաղիմահայութեան, վար կը դնեմ՝ համեստաբար գոհունակութիւն ունենալով սրտիս մէջ, թէ կարողացայ նոր աւիւն, խանդ ու եռանդ, ինչպէս նաեւ հետաքրքրութիւն բերել Սրբոց Թարգմանչացի ներսէն ու դուրսէն:

Ուրախ եմ որ այս տարիներու ընթացքին կարողացայ իմ ծառայութեան բաժինը բերել այս հրաշալի և բացառիկ գաղութին: Ներշնչուեցայ գաղութի անդամներէն և քաջալերուեցայ արդիւնքէն: Հպարտութեան զգացում մը կ'ապրիմ այսօր, երբ գիտեմ թէ Սրբոց Թարգմանչաց վարժարանի նախնիներուն՝ Նշանեան, Իսրայէլեան, և Գաբրիէաններու շարանին մաս կը կազմեմ: Վարժարանի մը, որ շրջանաւարտ սերունդներ հասցուց ու անոնց փոխանցած դաստիարակութեամբ այս գաղութին երիտասարդ ու առողջ ըլլալը ապահովեց ու կը շարունակէ ծառայել նոյն նպատակին:

Այս զգացական երեկոն, գոնէ ինծի համար, քաջ գիտակցելով՝ թէ որպէս տեսուչ վերջին անգամ ըլլալով այստեղ կեցած իմ ուղերձս պիտի հաղորդեմ ձեզի, իւրայատուկ կերպով պիտի յիշեմ ու իմ սրտին մէջ պահելով պիտի տանիմ, ուր որ ալ գտնուիմ:

Կարելոր է այստեղ յիշել և ճանչնալ քանի մը անձերու անուններ, առանց որոնց այս Վարժարանը յաջողութիւն պիտի չունենար: Անոնք եղան իմ վստահութեան և ապաւինման ժայռերը և այս գաղութի զաւակներուն մասին մտածողները: Հակառակ